ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 15.02.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/06

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «Դեագա» ՍՊԸ-ի 16.01.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Դեագա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Դեագա» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 16.01.2018թ. ներկայացրել էր բողոք, որով հայտնել էր, որ ՀՀ ԿԱ ԱԱԾ-ի կողմից ՝սննդամթերքի մատակարարման նպատակով կազմակերպված «ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-18/1-ՍՆՆԴԱՄԹԵՐՔ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև ընթացակարգ) մասնակցության հայտ էր ներկայացրել նաև Ֆ/Ա Իշխան Միրզոյանը:

Ֆ/Ա Իշխան Միրզոյանը ընթացակարգի գնահատող հանձնաժողովին որպես համանման պայմանագիր ներկայացրել էր ՀՀ ՊՆ և Ֆ/Ա Իշխան Միրզոյանի միջև 27.11.2014թ. կնքված պայմանագիր, որին կից հաշիվ-ապրանքագրի փոխարեն Ֆ/Ա Իշխան Միրզոյանի կողմից ներկայացվել էր գրություն այն մասին, որ ՀՀ ՊՆ և Ֆ/Ա Իշխան Միրզոյանի միջև 27.11.2014թ. կնքված ՇՀԱՊՁԲ-7/96-36 պայմանագրի և ՀՀ ՊՆ հետ 02.09.2015թ. կնքված ՇՀԱՊՁԲ-7/57-8 պայմանագրի մասով Ֆ/Ա Իշխան Միրզոյանը «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ չի հանդիսացել հարկ

վճարող, ուստի և չէր կարող պայմանագրերին կից ներկայացնել դրանց հաշիվ-ապրանքագրերի պատճենները:

Բողոքաբերը հայտնել է, որ Ֆ/Ա Իշխան Միրզոյանը ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.01.2018թ. կայացած նիստի թիվ 6 արձանագրության 1.4 կետի համաձայն ճանաչվել է ընտրված մասնակից՝ ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մասով, և վերջինիս առաջարկվել է սահմանված կարգով կնքել պայմանագիր:

«Դեագա» ՍՊԸ-ն իր կողմից ներկայացված բողոքում վկայակոչել է հետևյալ իրավական հիմքերը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 61-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես նույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Ընկերությունը նշել է նաև, որ Ընթացակարգի հրավերի 3.1 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ նույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով, հանձնաժողովին է ներկայացնում նույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված տարբերակը:

Ընկերությունը հայտնել է, որ Ֆ/Ա Իշխան Միրզոյանը հանձնաժողովին է ներկայացրել ՀՀ ՊՆ-ի հետ կնքած պայմանագրերն՝ առանց հաշիվ-ապրանքագրերի, ընդ որում, վերջինս նաև գրավոր հայտնել է, որ չի կարող ներկայացնել պայմանագրերին կից հաշիվ-ապրանքագրերի պատճենները:

Ընկերությունը գտնում է, որ Կարգի 61-րդ կետի 2-րդ ենթակետով և ընթացակարգի հրավերի 3.1 կետի 2-րդ ենթակետով պահանջվող հաշիվ-ապրանքագրերի բացակայության պայմաններում գնահատող հանձնաժողովն իրավունք չուներ Ֆ/Ա Իշխան Միրզոյանի կողմից մասնագիտական փորձառություն, որակավորման չափանիշին իր համապատասխանությունը հիմնավորելու համար ներկայացրած փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին բավարարող, առավել ևս՝ վերջինիս հաղթող մասնակից ճանաչել:

«Դեագա» ՍՊԸ-ն գտնում է նաև, որ վերը նշված որոշումներն ընդունելով՝ գնահատող հանձնաժողովը խախտել է Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, 34-րդ հոդվածի 1-

ին մասի, ինչպես նաև Կարգի 61-րդ կետի 2-րդ ենթակետի և հրավերի 3.1 կետի պահանջները:

Հիմք ընդունել վերոգրյալը՝ «Դեագա» ՍՊԸ-ն Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է.

1. Պարտավորեցնել «ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-18/1-ՍՆՆԴԱՄԹԵՐՔ» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին Ֆ/ա Իշխան Միրզոյանի կողմից մասնագիտական փորձառություն որակավորման չափանիշին իր համապատասխանությունը հիմնավորելու համար ներկայացրած փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին անհամապատասխան:

2. Դադարեցնել «ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-18/1-ՍՆՆԴԱՄԹԵՐՔ» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 11.01.2018թ. նիստի թիվ 6 արձանագրության 1.4 կետով ընթացակարգի 9-րդ չափաբաժինների մասով Ֆ/ա Իշխան Միրզոյանին հաղթող մասնակից ճանաչելու և վերջինիս հետ պայմանագիր կնքելու մասին որոշումները:

Բողոքի քննության նպատակով Խորհրդում կայացած նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ Լարիսա Հովակիմյանը:

2. <u>ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 19.01.2018թ. գրությամբ «Դեագա» ՍՊԸ-ի կողմից 16.01.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք, որ «Դեագա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

1. ՀՀ ԿԱ ԱԱԾ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-18/1-ՍՆՆԴԱՄԹԵՐՔ ծածկագրով գնանշման հարցում, որին ի թիվս այլ մասնակիցների մասնակցել են նաև Ֆ/Ա Իշխան Միրզոյանը և «Դեագա» ՍՊԸ-ն:

2. «Դեագա» ՍՊԸ-ն 09.01.2018թ. առձեռն ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և դիմում՝ պահանջելով անհապաղ տրամադրել մրցույթի

փաստաթղթերի պատճենները: ՀՀ ԿԱ ԱԱԾ-ի կողմից «Դեագա» ՍՊԸ-ին տրամադրվել են տվյալ պահի դրությամբ առկա բոլոր փաստաթղթերի պատճենները:

3. Հրավերի 2.5 կետի համաձայն՝ Ֆ/Ա Իշխան Միրզոյանը, որպես համանման պայմանագրեր, հրավերով սահմանված ժամկետում էլեկտրոնային փոստով ներկայացրել է ՀՀ ՊՆ հետ 02.09.2015թ. կնքած ՇՀԱՊՁԲ-7/96-3 պայմանագրի և պատշաճ կատարման մասին տեղեկանքի պատճենները, և առձեռն ներկայացրել է ՀՀ ԿԱ ԱԱԾ-ի հետ 10.02.2016թ. կնքած թիվ ՇՀԱՊՁԲ-11/121-2016 պայմանագրի, հանձնման-ընդունման արձանագրությունների և հաշիվ-ապրանքագրերի պատճենները: Տեխնիկական խնդիրների պատճառով վերը նշված առձեռն ներկայացրած փաստաթղթերը չեն տրամադրվել «Դեագա» ՍՊԸ-ին:

Ուսումնասիրելով Ֆ/Ա Իշխան Միրզոյանի կողմից ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը՝ հանձնաժողովը դրանք գնահատել է հրավերի պահանջներին բավարարող և ճանաչել հաղթող»:

Ի լրումն 19.01.2018թ. Խորհրդին ներկայացրած դիրքորոշմանը Պատվիրատուն 30.01.2018թ. գրությամբ հայտնել է իր առարկությունները Բողոքի վերաբերյալ՝ նշելով հետևյալը.

««Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհետ նաև՝ Օրենք/ 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Օրենքի 34-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

- 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

- 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին

համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

Կարգի 61-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես նույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Ֆ/Ա Իշխան Միրզոյանը որպես որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթեր ներկայացրել է ՀՀ պաշպատության նախարարության հետ 27.11.2014թ. կնքված թիվ «ՇՀԱՊՁԲ-7/96-3» պայմանագիրը, սակայն չի ներկայացրել դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները: Սակայն, Ֆ/Ա Իշխան Միրզոյանը Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում, այն է՝ 10.01.2018թ ներկայացրել է նաև ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության հետ 10.02.2016թ. կնքված թիվ «ՇՀԱՊՁԲ-11/21-2016» պայմանագրի պատճենը, դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն) պատճենները:

«ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-18/1-ՍՆՆԴԱՄԹԵՐՔ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.01.2018թ. ժամը 11:00-ին կայացված նիստի թիվ 6 արձանագրության 1-ին կետի 1.4 ենթակետի համաձայն՝ ընթացակարգի գնահատող

հանձնաժողովը՝ հիմք ընդունելով 29.12.2017թ. արձանագրությունը, մասնակցի կողմից ներկայացված ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, գնման առարկայի տեխնիկական բնութագրերը և գնահատման թերթիկները, հանձնաժողովը որոշել է ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մասով հաղթող ճանաչված Ֆ/Ա Իշխան Միրզոյանի հետ կնքել պայմանագիր:

Այսպիսով, հանձնաժողովը գտել է, որ Ֆ/Ա Իշխան Միրզոյանի կողմից ներկայացված հրավերով պահանջվող որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում ներկայացված լինելու պարագայում համապատասխանել են Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, Կարգի 61-րդ կետով և հրավերի 3.1 կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջներին: Պատվիրատուն գտել է, որ վերջինիս կողմից ներկայացված 10.02.2016թ. կնքված թիվ «ՇՀԱՊՁԲ-11/21-2016» պայմանագիրը լիովին համապատասխանում է վերոնշյալ իրավական նորմերով սահմանված պահանջներին, և այդ պատճառով հանձնաժողովը չի կիրառել Կարգի 47-րդ կետով սահմանված դրույթները և մասնակցից չի պահանջել շտկել 27.11.2014թ. կնքված թիվ «ՇՀԱՊՁԲ-7/96-3» պայմանագով առկա անհամապատասխանությունները (այդ թվում մասնակիցը կարող է ներկայացնել նաև նոր պայմանագրեր, ինչն արդեն ներկայացրել է առձեռն): Ինչ վերաբերում է «Դեագա» ՍՊԸ-ի կողմից բողոքի մեջ նշված այն հանգամանքին, որ Պատվիրատուն իրավունք չուներ առձեռն վերցնել Ֆ/Ա Իշխան Միրզոյանի կողմից ներկայացված փաստաթղթերը, տրամաբանությունից ամբողջությամբ դուրս է, չի բխում Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված պահանջներից, քանի որ ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայությունը առաջին հերթին նպատակ է ունեցել որակյալ և մատչելի ապրանք ձեռք բերել, իսկ մասնակցի կողմից հրավերով նախատեսված ժամկետի խախտում չի եղել, և փաստաթղթերի ներկայացման ձևի պարագայում Պատվիրատուն առաջնորդվել է Օրենքի 3-րդ և 5-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներով:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ «ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-18/1-ՍՆՆԴԱՄԹԵՐՔ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ, չի խախտել բողոքաբերի կողմից նշված Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, Կարգի 61-րդ կետով և հրավերի 3.1 կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջները և Գնումների բողոքարկման խորհրդին խնդրում ենք՝

1. ՍՊԸ-ի կողմից 16.01.2018թ. ներկայացված բողոքը մերժել ամբողջությամբ:

2. Բողոքն ամբողջությամբ չմերժելու պարագայում, խնդրում ենք թույլ տալ Պատվիրատուին Կարգի 47-րդ կետով սահմանված պահանջների համապատասխան մասնակցից պահանջել շտկել անհամապատասխանությունները և հնարավորություն ընձեռել ներկայացնելու հրավերով նախատեսված որակավորումը հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը նախկինում կատարված նմանատիպ պայմանագրերը»:

Խորհրդի նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Հրաչյա Ավետիսյանը:

3. <u>Ֆ/Ա Իշխան Միրզոյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ԳԲԽ-ԷՍ-2018/06 բողոքի քննության շրջանակներում որպես երրորդ անձ ներգրավված Ֆ/Ա Իշխան Միրզոյանի 12.02.2018թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը,

բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

Կարգի 61-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված

ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես նույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության (այսուհետ նաև՝ պատվիրատու) կողմից կազմակերպված «ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-18/1-ՍՆՆԴԱՄԹԵՐՔ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ նաև՝ ընթացակարգ), ի թիվս այլ մասնակիցների, մասնակցել է նաև Ֆ/Ա Իշխան Միրզոյանը (այսուհետ նաև՝ ընկերություն) և ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.12.2017թ. թիվ 5 արձանագրության 4.1 կետի համաձայն, թիվ 9 չափաբաժնի (կարտոֆիլ) մասով՝ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

29.12.2017թ. armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով պատվիրատուն ծանուցել է՝ հրավերով սահմանված կարգով և ժամկետներում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հավաստող փաստաթղթերը և գնման առարկաների տեխնիկական բնութագրերը:

29.12.2017թ. ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 5 արձանագրության 4.1 կետով հանձնաժողովը որոշել է հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղն զբաղեցրած մասնակիցներից հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հավաստող փաստաթղթերը և գնման առարկաների տեխնիկական բնութագրերը ներկայացնելու օրվան հաջորդող 2 աշխատանքային օրվա ընթացքում:

31.12.2017թ. Ֆ/Ա Իշխան Միրզոյանի կողմից, իր էլ.փոստից՝ ishxan.mirzoyan@mail.ru, հրավերում նշված պատվիրատուի պաշտոնական էլ.փոստին՝ tv@sns.am, ուղարկվել են հրավերով սահմանված կարգով և ժամկետում (երեք աշխատանքային օր) որակավորման չափանիշները հավաստող փաստաթղթերը, այդ թվում ՀՀ պաշպատության նախարարության հետ 27.11.2014թ. կնքված թիվ «ՇՀԱՊՁԲ-7/96-3» պայմանագիրը և տվյալ

պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը պայմանագրի պատշաճ կատարման վերաբերյալ, գնման առարկայի տեխնիկական բնութագրերը:

09.01.2018թ. ընկերությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ 09.01.2018թ. դրությամբ չի լրացել ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշները հավաստող փաստաթղթերը և գնման առարկաների տեխնիկական բնութագրերը ներկայացնելու ժամկետը (3 աշխատանքային օր), ընկերությունը հրավերով սահմանված ժամկետում ցանկանում է ուղարկել ևս մեկ պայմանագիր, սակայն ներկա պահին ընկրության էլ. փոշտի հետ կապված կան խնդիրներ և էլեկտրոնային եղանակով այն չի կարող ուղարկել, այդ իսկ պատճառով պատվիրատուն պահանջեց փաստաթղթերը ներկայացնել առձեռն:

10.01.2018թ.՝ կից գրությամբ, որում հստակ երևում է փաստաթղթի մուտք լինելու ժամանակը, առձեռն ներկայացվել են ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության հետ 10.02.2016թ. կնքված թիվ «ՇՀԱՊՁԲ-11/21-2016» պայմանագրի պատճենը, դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն) պատճենները:

18.01.2018թ. ընկերության ներկայացուցիչը գրություն է ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն, որով խնդրել է տալ պարզաբանում՝ կարող է արդյոք Ֆիզիկական անձը 16.12.2016թ. ընդունված «Գնումների մասին» ՀՀ օրենքով կազմակերպվող գնման ընթացակարգերում որպես մասնագիտական փորձառությունը հավաստող փաստաթուղթ ներկայացնել ՀՀ ՊՆ հետ 2014թ. կնքված պայմանագիրը և տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Ուսումնասիրելով փաստական հանգամանքները՝ ֆինանսների նախարարությունը 31.01.2018թ. պատասխան գրությամբ հայտնել է, որ եթե գրության մեջ նշված նմանատիպ պայմանագրի կատարման շրջանակներում ֆիզիկական անձի կողմից հաշիվ ապրանքագրեր (հաշվարկային փաստաթղթեր) դուրս չեն գրվել, ապա տվյալ դեպքում ֆիզիկական անձի համար հաշիվ ապրանքագրեր ներկայացնելու պահանջը կիրառելի չէ:

07.02.2018թ. ընկերությունը գրություն է ուղարկել ՀՀ ՊՆ և հայտնել, որ 2014թ. կնքված ՇՀԱՊՁԲ-7/96-3 պայմանագրի արդյունքում ՀՀ ՊՆ-ին մատակարարել է բանջարեղեն ու պայմանագրի կատարման շրջանակում ՀՀ ՊՆ-ի կողմից հաշիվ ապրանքագրեր չեն պահանջվել և ընկերության կողմից հաշիվ-ապրանքագրեր դուրս չեն գրվել և խնդրել վերոգրյալի վերաբերյալ տրամադրել տեղեկանք:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ Ֆ/Ա Իշխան Միրզոյանը որպես «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ ներկայացրել է ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետում երկու պայմանագիր.

1. ՀՀ պաշպատության նախարարության հետ 27.11.2014թ. կնքված թիվ «ՇՀԱՊՁԲ-7/96-3» պայմանագիրը, սակայն չի ներկայացրել դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, քանի որ տվյալ դեպքում ֆիզիկական անձի համար հաշիվ-ապրանքագրեր ներկայացնելու պահանջը կիրառելի չէ, որը նաև հաստատվում է ընկերության 18.01.2018թ. ՀՀ ՖՆ հասցեագրված գրությանն ի պատասխան 20.01.18թ. ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված թիվ 03/27-1/1546-18 գրությամբ:

Ինչպես նաև խորհրդի ուշադրությունն ենք հրավիրում այն փաստին, որ Ֆ/Ա Իշխան Միրզոյանից Հարկ վճարողի հաշվարկման համար (ՀՎՀՀ) պահանջվել և վերջինիս կողմից ձեռք է բերվել 09.06.2015թ.:

2. ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության հետ 10.02.2016թ. կնքված թիվ «ՇՀԱՊՁԲ-11/21-2016» պայմանագրի, դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն) պատճենները:

09.01.2018թ. ընկերության էլ. փոստի խափանման պատճառով ընկերությունը փաստացի զրկված է եղել վերը նշված պայմանագիրը ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետում ուղարկելու հնարավորությունից:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ ընկերության կողմից ընթացակարգի հրավերի «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի գնահատման համար ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետում ներկայացված երկու պայմանագրերն էլ բավարար են հրավերի պահանջներին:

Հաշվի առնելով վերոգրյալ փաստական հանգամանքները՝ ընկերությունը գտնում է, որ «ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-18/1-ՍՆՆԴԱՄԹԵՐՔ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ, չի խախտել բողոքաբերի կողմից նշված Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, Կարգի 61-րդ կետով և հրավերի 3. 1 կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջները, և Գնումների բողոքարկման խորհրդին խնդրում է «Դեագա» ՍՊԸ-ի կողմից 16.01.2018թ. ներկայացված բողոքը մերժել ամբողջությամբ»:

Խորհրդի նիստերին մասնակցում էր Ֆ/Ա Իշխան Միրզոյանի լիազորված ներկայացուցիչ Աննա Ղուկասյանը:

4. **<u>ԳԲԽ-ԷՍ-2018/06 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

Խորհուրդն ուսումնասիրել է «Դեագա» ՍՊԸ-ի կողմից 16.01.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, «ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-18/1-ՍՆՆԴԱՄԹԵՐՔ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-18/1-ՍՆՆԴԱՄԹԵՐՔ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 11.12.2017թ. ժամը 11:00-ի հայտերի բացման նիստի N 2, 14.12.2017թ. ժամը 12:00-ի նիստի N 3, 26.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի N 4, 29.12.2017թ. ժամը 11:15-ի նիստի N 5 և 11.01.2018թ. ժամը 11:15-ի նիստի N6 արձանագրությունները, Ֆ/Ա Իշխան Միրզոյանի կողմից ներկայացված հայտի պատճենը, Ֆ/Ա Իշխան Միրզոյանի կողմից 12.02.2018թ. Խորհրդին ներկայացված դիրքորոշումը և կից փաստաթղթերը, Պատվիրատուի դիրքորոշումը և կարծիքը.

ՀՀ ԿԱ ԱԱԾ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-18/1-ՍՆՆԴԱՄԹԵՐՔ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ), ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ են ներկայացրել Ֆ/Ա Իշխան Միրզոյանը և «Դեագա» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովի 11.12.2017թ. ժամը 11:00-ի հայտերի բացման նիստի N 2 արձանագրության 3.1 կետի համաձայն՝ Ֆ/Ա Իշխան Միրզոյանի Ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մասով ներկայացրած գնային առաջարկը կազմել է 13,020,000 ՀՀ դրամ, իսկ «Դեագա» ՍՊԸ-ի կողմից նույն չափաբաժնի մասով ներկայացրած գնային առաջարկը կազմել է 17,1600,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

Նույն արձանագրության 4.1 կետով կայացված որոշմամբ Ֆ/Ա Իշխան Միրզոյանը 9-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղն զբաղեցրած մասնակից:

Հանձնաժողովը 29.12.2017թ. ժամը 11:15-ի նիստի N 5 արձանագրության 4.1 կետով որոշեց հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղն զբաղեցրած մասնակիցներից հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հավաստող փաստաթղթերը և գնման առարկաների տեխնիկական բնութագրերը ներկայացնելու օրվան հաջորդող 2 աշխատանքային օրվա ընթացքում:

Ֆ/Ա Իշխան Միրզոյանը որպես «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ սահմանված ժամկետում Հանձնաժողովին է ներկայացրել երկու համանման պայմանագրեր, այդ թվում՝

- ՀՀ պաշպատության նախարարության հետ 27.11.2014թ. կնքված թիվ «ՇՀԱՊՁԲ-7/96-3» պայմանագիրը՝ 40,664,442 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով: Պայմանագրին կից գրությամբ Ֆ/Ա Իշխան Միրզոյանը հայտնել է, որ նշված պայմանագրի մասով «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ որպես ֆիզիկական անձ չի հանդիսացել հարկ վճարող, և չի կարող պայմանագրին կից ներկայացնել հաշիվ-ապրանքագրեր:

- ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության հետ 10.02.2016թ. կնքված թիվ «ՇՀԱՊՁԲ-11/21-2016» պայմանագիրը՝ 15,336,442 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով, դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն) պատճենները:

Հանձնաժողովը 11.01.2018թ. ժամը 11:15-ի նիստի N6 արձանագրության 1.4 կետով որոշեց Ընթացակարգի N9 չափաբաժնի մասով հաղթող ճանաչված Ֆ/Ա Իշխան Միրզոյանի հետ «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն կնքել պայմանագիր:

Բողոքի քննության նպատակով 22.01.2018թ. Խորհրդում տեղի ունեցած նիստի ժամանակ «Դեագա» ՍՊԸ-ի ներկայացուցիչը պնդեց Բողոքն ամբողջությամբ և հայտնեց, որ Ֆ/Ա Իշխան Միրզոյանին Ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մասով հաղթող մասնակից ճանաչելու մասին Հանձնաժողովի որոշումը ընդունվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների կոպիտ խախտմամբ: Վերջինս իր դիրքորոշումը հիմնավորեց այն փաստարկով, որ Ընթացակարգի հրավերի 3.1 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հրավերով նախատեսված «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին իր համապատասխանությունը հիմնավորելու համար առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը պարտավոր էր հանձնաժողովի քարտուղարին՝ նույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրել հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված

տարբերակը: Մինչդեռ, Ֆ/Ա Իշխան Միրզոյանը հանձնաժողովին է ներկայացրել ՀՀ ՊՆ-ի հետ կնքած պայմանագրերը՝ առանց հաշիվ-ապրանքագրերի, ինչն ըստ բողոքաբերի անընդունելի է և չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներից:

Պատվիրատուի ներկայացուցիչն ընդունեց, որ Ֆ/Ա Իշխան Միրզոյանը որպես որակավորումը հիմնավորող փաստաթղթեր ներկայացրել է ՀՀ պաշպատության նախարարության հետ 27.11.2014թ. կնքված թիվ «ՇՀԱՊՁԲ-7/96-3» պայմանագիրն առանց հաշիվ-ապրանքագրերի պատճենների, ինչպես նաև սահմանված ժամկետում, այն է՝ 10.01.2018թ. ներկայացրել է նաև ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության հետ 10.02.2016թ. կնքված թիվ «ՇՀԱՊՁԲ-11/21-2016» պայմանագրի պատճենը, և նույն օրը՝ 10.01.2018թ. կից գրությամբ՝ առձեռն ներկայացրել է ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության հետ 10.02.2016թ. կնքված թիվ «ՇՀԱՊՁԲ-11/21-2016» պայմանագրի պատճենը, դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն) պատճենները: Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ Ընթացակարգի Հանձնաժողովի գնահատմամբ նշված «ՇՀԱՊՁԲ-11/21-2016» պայմանագիրը լիովին համապատասխանել է Հրավերով սահմանված պահանջներին, ուստի հանձնաժողովը չի կիրառել Կարգի 47-րդ կետով սահմանված դրույթները և մասնակցից չի պահանջել շտկել 27.11.2014թ. կնքված թիվ «ՇՀԱՊՁԲ-7/96-3» պայմանագով առկա անհամապատասխանությունները:

Ի լրումն 16.01.2018թ. Խորհրդին ներկայացրած Բողոքի «Դեագա» ՍՊԸ-ն 25.01.2018թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ԿԱ ԱԱԾ-ի կողմից սննդամթերքի մատակարարման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-18/1-ՍՆՆԴԱՄԹԵՐՔ» ծածկագրով գնանշմանհարցում (այսուհետևնա՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.12.2017թ. նիստի թիվ 5 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է՝ հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցներից հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հավաստող փաստաթղթերը և գնման առարկաների տեխնիկական բնութագրերը ներկայացնելու օրվան հաջորդող 2 աշխատանքային օրվա ընթացքում:

Ընթացակարգի գնահատողհանձնաժողովի 11.01.2018թ. նիստի թիվ 6 արձանագրության 1.3 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է Ընթացակարգի 9 չափաբաժնի մասով հաղթող ճանաչված մասնակցի Ֆ/Ա Իշխան Միրզոյանի հետ «Գնումներիմասին» ՀՀ օրենքի համաձայն կնքել պայմանագիր:

Ի լրումն ներկայացված Բողոքին «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ն 16.01.2018թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել, որ գնահատող հանձնաժողովն իրավունք չուներ Ֆ/Ա Իշխան Միրզոյանի հայտը գնահատել բավարար, եթե անգամ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ֆ/Ա ԻշխանՄիրզոյանի մասնագիտական փորձառություն որակավորման չափանիշին իր համապատասխանության հիմնավորման համար հիմք է ընդունել Ֆ/Ա ԻշխանՄիրզոյանի և ՀՀ ԿԱ ԱԱԾ-ի միջև 10.02.2016թ. կնքված թիվ ՇՀԱՊՁԲ-11/121-2016 պայմանագրի, դրա հանձնման-ընդունման արձանագրությունների և հաշիվ-ապրանքագրերի պատճենները, քանի որ, ինչպես Պատվիրատուն է նշել իր դիրքորոշման մեջ, նշված փաստաթղթերը Ֆ/Ա ԻշխանՄիրզոյանի կողմից ներկայացվել են առձեռն, ինչն ուղղակիորեն հակասում է Հրավերի 8.13 և 8.14 կետերով սահմանված պահանջներին:

Անդրադառնալով «Դեագա» ՍՊԸ-ի կողմից հայտնած վերոհիշյալ նկատառմանը, ըստ որի Պատվիրատուն իրավունք չուներ առձեռն ընդունել Ֆ/Ա Իշխան Միրզոյանի կողմից ներկայացված փաստաթղթերը՝ Պատվիրատուն հայտնեց, որ այն անտրամաբանական է և չի բխում Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված պահանջներից, քանի որ ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայությունն առաջին հերթին նպատակ է ունեցել որակյալ և մատչելի ապրանք ձեռք բերել, առավել ևս այն պայմաններում, երբ մասնակցի կողմից չեն խախտվել որակավորումը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու համար հրավերով նախատեսված ժամկետները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 61-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը

գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես նույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

«Ավելացված արժեքի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝ անհատ ձեռնարկատեր չհամարվող ֆիզիկական անձը, նույն օրենքի համաձայն, ապրանքի մատակարարում համարվող և ԱԱՀ-ով հարկման ենթակա գործարքների մասով նույն օրենքով սահմանված կարգով կարող է դուրս գրվել հարկային հաշիվ՝ միայն գնորդ կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ պահանջով, և եթե այդ ֆիզիկական անձն ունի հարկ վճարողի հաշվառման համար:

Ֆ/Ա Իշխան Միրզոյանը Խորհրդին ներկայացրեց ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետի գրությունը, որով վերջինս հայտնել է, որ 2014թ. կնքված ՇՀԱՊՁԲ-7/96-3 պայմանագրի կատարման շրջանակներում ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի կողմից փաստաթղթերն ընթացքավորվել են հանձնման-ընդունման արձանագրությունների և կատարողական ակտերի հիման վրա:

Ֆ/Ա Իշխան Միրզոյանը հայտնել է նաև, որ Հարկ վճարողի հաշվարկման համար (ՀՎՀՀ) ձեռք է բերվել 09.06.2015թ.:

Խորհուրդն արձանագրում է, որ Ֆ/Ա Իշխան Միրզոյանի կողմից ներկայացվել է ՀՀ պաշպատության նախարարության հետ 27.11.2014թ. կնքված թիվ «ՇՀԱՊՁԲ-7/96-3» պայմանագիրը՝ 40,664,442 ՀՀ դրամ ընդհանուր գումարով:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ Ֆ/Ա Իշխան Միրզոյանի կողմից Ֆ/Ա Իշխան Միրզոյանի և ՀՀ ԿԱ ԱԱԾ-ի միջև 10.02.2016թ. կնքված թիվ ՇՀԱՊՁԲ-11/121-2016 պայամանագրի, դրա հանձնման-ընդունման արձանագրությունների և հաշիվ-ապրանքագրերի պատճենները, Պատվիրատուին ներկայացվել են առձեռն, ինչը չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներից:

Ելնելով վերոգրյալից և ուսումնասիրելով թիվ «ՇՀԱՊՁԲ-7/96-3» պայմանագիրը և կից փաստաթղթերը՝ Խորհուրդը գտնում է, որ Ֆ/Ա Իշխան Միրզոյանի կողմից որպես Օրենքի

6-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի համապատասխանությունը հիմնավորելու նպատակով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են Հրավերով սահմանված պահանջներին:

Ելնելով վերոգրյալից ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Դեագա» ՍՊԸ-ի կողմից 16.01.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ